ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«19» հունվարի 2011թ. N 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԲԵՆԶԻՆԻ ԵՎ (ԿԱՄ) ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՐԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (16.12.2010թ. ՀՕ-67-Ն) համաձայն 2011 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

««Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (16.12.2010թ. ՀՕ-68-Ն) համաձայն 2011 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ը» կետը:

«Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ 2011 թվականի հունվարի 1-ից բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 112000 ՀՀ դրամի:

«Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ներմուծվող բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ավելացվող գումարը բաղկացած է երկու մասից՝ ակցիզային հարկի գումար և դրա նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումար:

Օրինակ.

Կազմակերպության ներմուծած բենզինի 1 տոննայի մաքսային արժեքը կազմել է 320000 դրամ: Ներմուծված բենզինի 1 տոննայի համար ակցիզային հարկի դրույքաչափը օրենքով սահմանված է 25000 դրամ: Հաշվարկվող ԱԱՀ-ի գումարը կկազմի 69000 դրամ [(320000+25000)x20%], իսկ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հանրագումարը՝ 94000 դրամ (69000+25000): Քանի որ «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ներմուծվող բենզինի համար ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը չպետք է պակաս լինի 112000 դրամից, կազմակերպության կողմից պետք է վճարվի նաև 18000 դրամ (112000-94000), որում ակցիզային հարկի մեծությունը կազմում է 15000 դրամ, իսկ ավելացված արժեքի հարկի մեծությունը՝ 3000 դրամ (վերջինս կարող է հաշվարկվել կամ ԱԱՀ-ի հաշվարկային դրույքաչափի (16.67%) կիրառմամբ (18000x16.67%), կամ որպես լրացուցիչ վճարվող գումարի 1/6 մաս): Տվյալ դեպքում ներմուծվող բենզինի 1 տոննայի համար կազմակերպությունը պետք է վճարի ակցիզային հարկ՝ 40000 դրամ, իսկ ԱԱՀ՝ 72000 դրամ:

2. Քանի որ ««Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (16.12.2010թ. ՀՕ-66-Ն) և ««Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (16.12.2010թ. ՀՕ-69-Ն) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներն ուժի մեջ են մտնում 2011 թվականի հունվարի 1-ից, բենզինի և (կամ) դիզելային

վառելիքի արտադրանքի ավելացված արժեքի հարկով և ակցիզային հարկով հարկմանը վերաբերող օրենքների դրույթները կիրառվում են 2011 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծվող և իրացվող բենզինի և (կամ) դիզելային վառելիքի արտադրանքների նկատմամբ:

3. 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ներմուծողների մոտ առկա բենզինի և (կամ) դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների իրացման գործարքների մասով հարկային պարտավորությունները հաշվարկվում են մինչև 2011 թվականի հունվարի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Ապրանքային մնացորդների օտարման մասով ներմուծողները վճարում են շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճար՝ «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափով, իսկ նրանց կողմից բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի մասով՝ նաև հաստատագրված վճար՝ «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված չափով:

4. Հարկ վճարողների (այդ թվում՝ ներմուծողների) մոտ 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա բենզինի և (կամ) դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների իրացման գործարքների մասով հարկային հաշիվներ դուրս չեն գրվում:

5. 2011 թվականի հունվարի 1-ից հետո դիզելային վառելիքի ներմուծումը և իրացումը (այդ թվում՝ ներմուծող չհանդիսացող անձանց կողմից) ազատվում է ավելացված արժեքի հարկից: Դիզելային վառելիքի իրացման գործարքների մասով հարկային հաշիվներ դուրս չեն գրվում:

6. 2011 թվականի հունվարի 1-ից հետո բենզինի իրացումների դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկային հաշիվներ դուրս են գրվում.

1) բենզին ներմուծողների կողմից՝ 2011 թվականի հունվարի 1-ից հետո ներմուծված բենզինի օտարման՝ օրենքով ԱԱՀ-ի 20 տոկոս (հաշվարկային՝ 16.67%) դրույքաչափով հարկվող գործարքների մասով,

2) բենզինի ներմուծող չհանդիսացող անձանց կողմից՝ հարկային հաշիվներով ձեռքբերված բենզինի օտարման այն գործարքների մասով, որոնք ենթակա են ԱԱՀ-ի 20 տոկոս (հաշվարկային՝ 16.67 %) դրույքաչափով հարկման:

7. 2011 թվականի հունվարի 1-ից հետո հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հարկային հաշիվ չհանդիսացող հաշվարկային փաստաթղթերի հիման վրա «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվանցումներ (նվազեցումներ) չեն կատարվում (2011 թվականի հունվարի 1-ից հետո «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթը չի կիրառվում):

8. 2011 թվականի հունվարի 1-ից հետո բենզինի գծով ձեռքբերումների մասով ԱԱՀ վճարողները ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցումներ կարող են կատարել միայն հարկային հաշվի առկայության դեպքում:

9. 2011 թվականի հունվարի 1-ից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բենզին և (կամ) դիզելային վառելիք ներկրող՝ ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողները հաշվանցման իրավունք են ձեռք բերում ԱԱՀ-ով հարկվող գործարքների (այդ թվում՝ բենզինի իրացման ԱԱՀ-ով հարկվող գործարքների) մասով:

ՊԵՏ,
Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ԲԱԼԱՅԱՆ**